

կարի անոնց պատճառքը. և ապա վերջաբանով մի և նախաբանու-
թեամբ երկրորդ գրուցն՝ կը կնքէ առաջին գիրքը՝

Երկրորդ գրոց այն մասն՝ ուր բովանդակ Պարսից քէշին դէմ կը խօ-
սի, ամենէն աւելի ընտիր՝ իմաստասիրական կորովով լի և հարազատ
մասն է. զոր կարելի է ամբողջութիւն մի նկատել՝ բաց ՚ի վերջին էջերէն
(146—149), որ սակաւ մի կցկտուր կ'երևին, և ուր առանց վերջնական
եզրակացութեան կը ձգէ եզնիկ իւր խօսքը։ Յետ որոյ (յէջ 149—185)
կը սկսի դարձեալ այլևայլ մոլար կարծիքներ մէջ բերել և հերքել զա-
նոնք՝ նման յառաջին գիրս գտնուած խնդրոց, որ յիրաւի անոնց շարու-
նակութիւն կամ մաս մի են։ Դարձեալ այն կտորն՝ ուր կը խօսի
բախտից, ծննդոց և բաշխից վերայ՝ (155—163 էջ), գրեթէ հետևե-
ղութիւն մ'է Ս. Բարսղի վեցօրէից՝ եթէ ոչ բառից՝ գոնեա իմաստից
և օրինակաց (117—123)։ Իսկ յէջն 185 կը սկսի Գ գիրքն, որ ըստ
տպագրին վերջին մասն է Բ գրոց. ուր կը խօսի Յունաց իմաստնոց
դէմ, որք բնաւ չընդունելով մի Աստուածութիւն և Նախախնամու-
թիւն, կ'աստուածացնէին բնութիւնը, տիեզերքը և երկնից լուսաւոր-
ները. այս Գ գիրքս կ'արժէ առանձին նկատողութեան առնուլ։

Շարունակելի

Հ. Յ. Թ.

ՍՈՐԵՐԳԱՅՈՒԹԻՒՆԵՐ

ՍԱԼՄՈՍԱՅ ԳՐՈՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ

Դուիթ մարգարէին Սաղմոսաց գիրքը, երեք հազար տարիներու
միջոց, բիւրաւոր և միլիոնաւոր օրինակներ, նախ ձեռագիր՝ և ապա
տպուած, տարածուած է միլիոնաւոր ժողովրդոց ձեռք. գրեթէ ա-
մենայն ծանօթ լեզուներով թարգմանուած է. ինչպէս հին հրէական
եկեղեցւոյ մէջ, նոյնպէս ևս քրիստոնեայ կեկեղեցեաց մէջ, չեն կատա-
րուի ոչ մի պաշտամունք առանց Սաղմոսաց. ժամերգութեան մէջ,
Ս. Պատարագի միջոց, մկրտութեան, պսակի, նոյն և մեռելաթաղի ա-
տեն, մերթ չեն և ջուարթ, երբեմն տրտում և տխուր եղանակաւ կը
լսուի Ս. Մարգարէին ձայնը։ Չգիտեմ կայ արդեօք աշխարհիս վերայ,
դպրութեան տեղեակ մէկը, որ չզիտնայ Մ սաղմոսը, և իւր ծածուկ
մեղաց համար, ծածկագիրտին առաջ չզղչայ իւր մեղքերը։ Սրբազան
հայրապետներ, ճգնազգեաց արեղայններ, զղացեալ մեղաւորներ, հա-

1. Յեթներորդ դարու, մեծ Զափաքան Անանիա Շիրակացին՝ իւր առջին ունենալով դեւ-
չուան ևս, զԲարսղի և զԵզնիկ, անոնց բազմատութեամբ՝ աւելի ընդարձակել և հշիւր է սոյն
խնդիրը իւր գրոց մէջ «Յաւագո իրիայն զարտոց և»

րուստ, աղքատ, արք և կանայք կը կարդան հոգեշունչ Սաղմոսները, և կը գտնան նոցա մէջ իրենց սրտին սփոփանք. կան այնպիսիք մեր ազգին մէջ, նոյն իսկ կանայք, որ իբր պարտք օրուան մէջ մի գորշայ Սաղմոս կու քաղեն: Երեք հազար տարի տնցնելէն վերջ, միլիոնաւոր զարգացեալ ժողովրդոց մէջէն չէ ելած կամ հրատարակուած մի այլ աղօթամատոյց գիրք, որ կարենայ Մարգարէին Սաղմոսաց տեղը բռնել: Ի՞նչ կը զրուցեմ այլ աղօթամատոյց, ամէն աղօթագրքի մէջ դարձեալ Դաւթի Սաղմոսը կը գտնեմք զանազան ձևերով գրուած: Ի՞նչ է արդեօք դորա պատճառը:

Գերմանացի Հաննէրերգ վարդապետը կը զրուցէ. « Այնպիսի երգեր՝ որոնք Աստուծոյ գոյութիւնը մարդու սրտին կ'ազդեն, միայն ճարայական Սաղմոսը մեզ կ'աւանդեն: Ամենայն մարդ, շատ անգամ աւանց իւր գիտակցութեան՝ կը գիմէ, և պէտք է գիմէ առ իւր սկիզբն և վերջն, առ ստեղծողն, որ է Աստուած: Եւ ահա՛ առ այն կ'առաջնորդեն մեզ Ս. Մարգարէին Սաղմոսները: Առ Աստուած գիմելու համար մարդու միջոց, միտք, իմաստ ու բացատրութիւնք հարկաւոր են, և այդ ամէնը կը գտնանք Սաղմոսաց մէջ: Այդ մտքերը պէտք է լինին մեր կարողութեան իմանալի և պարզ: Ամենապարզ և համարձակ լեզուով կը խօսի Մարգարէն իւր ստեղծողին հետ՝ Սաղմոսաց մէջ. և Ս. Եկեղեցի մեզ կը սորվեցնէ որ այդ 150 Սաղմոսը, ամէնքն ևս աստուածային ազգեցութեամբ գրուած են:

Սակայն այս կարևոր է գիտնալ, թէպէտ և Դաւթի մարգարէն պարզ լեզուով գրած է իւր Սաղմոսները. այլ որովհետև կանոնաւոր կերպով երգելու և նուագելու համար գրած է՝ այդ հոգեշունչ բանաստեղծութիւնքը, այն պատճառաւ չափեալ տողերու տրոհած է: «Չորեք հազարք օրհնիչք Տեաւն, նուագարանօքն՝ որովք արարին օրհնել զՏէր:» (Ա. Մնաց. ԻԳ. 5): Կարելի չէ՝ որ չափեալ տողերը կամ ոտանաւոր գրուածք նոյն կարգը ունենան բառերու շարագրութեան մէջ, ինչ կարգաւ որ կը վարենք պարզ արձակ գրութեան միջոց. Սաղմոսաց մէջ այդ բանը յայտնի կ'երևայ, բառերու ետևառաջութիւն, բացատրութեանց անսովոր ձևեր, որք յայտնի նշան են ոտանաւոր գրութեան: Առ հասարակ թարգմանիչք բառ առ բառ թարգմանել են Սաղմոսները, ինչպէս որ հարկը կը պահանջէ, իբրև Սրբազան Գիրք: Այդ է ահա պատճառը որ Սաղմոսը իրենց բնատրիպ պարզութիւնը յեբրայականին կորսնցուցել են թարգմանութեանց մէջ մինչև անգամ տեղ տեղ մոլթ և անիմանալի եղած են:

Առաջին թարգմանութիւն Սաղմոսաց ՚ի յոյն լեզու, եղած է Քրիստոսի թուականէն 250 տարի առաջ, Դաւթի Մարգարէէն 800 տարի վերջը. առաջին թարգմանութեանէն 800 տարի վերջը եղած է մեր հայ թարգմանութիւնը ՚ի ձեռն Ս. Սահակայ հայոց հայրապետի, ըստ վկայութեան կորեան. «Երանելոյն Սահակայ՝ զեկեղեցական գրոց

գումարութիւնն կանխաւ 'ի հայերէն դարձուցեալ » : Եկեղեցական գրող մէջ, ինչպէս կանխեր ենք զրուցել, առաջին տեղին ունին Սաղմոսք :

Ոմանք կարող են առարկել, թէ Սաղմոսք Ս. Սահակայ թարգմանութիւնը են, ապա ինչո՞ւ չունին ոչ Երանդոյ գրող և ոչ Աւետարանաց պարզութիւնը և սահուն ոճը : Այդոր պատճառը թէպէտեւ կանխաւ զրուցածներուս մէջ կ'ամբիօփի, այլ աստ կարող եմ երկրորդել այսպէս .— ինչպէս ամենայն ազգք բառ առ բառ թարգմանեցնեն սաղմոս, այսպէս և մեր երանելի հայրապետը բառական և ոչ ազատ թարգմանութիւն արել է. և որովհետեւ Սաղմոսք ոտանաւոր գրուածք են յերայականին, այն պատճառաւ ու կարելի չէ մեր բառական թարգմանութիւնը, արձակ գրութեան սահուն ոճը ունենայ : Միայն թէ այսպիսի մի ենթադրութիւն անելու լինի՞ր, կարծեմ ճշմարտութեան շատ կը մօտենամք : Ս. Սահակայ առաջին ձեռք թարգմանութիւնը Սաղմոսաց, իսկոյն մուտ գտել է եկեղեցական պաշտամանց մէջ, որով և ընդելացել են ազգիս . յետագայ թարգմանիչք, արդէն գործածուած Սաղմոսաց ձեռք մերձեցնելու զգուշացել են : Սոյն այս դէպքիս յար և նմանը պատահել է լատինաց մէջ . Ս. Հերոնիմոսի հանրածանօթ վուլգատայ կոչուած թարգմանութենէ առաջ, ունեցել են լատինք Սաղմոսաց թարգմանութիւնք, փոփոխ ընթերցուածներով : Սրբոյն թարգմանութենէ շատ ժամանակ ևս յետոյ հին թարգմանութեամբ վարել են, շատ եկեղեցիք արդէն ընդելացած լինելով հնայն :

Առհասարակ ամենայն երայագէտք կը վկայեն որ բովանդակ Սաղմոսք ոտանաւոր գրուած են, սակայն տակաւին եղած չէ որ, որ պարզէ կամ ուսուցանէ այդ երայացի բանաստեղծութեան տաղաչափական կանոնները :

Ոմենապարզ պէտք է լինին Սաղմոսք յերայական բնագրին . խօսքերուս հաւաստիք են նոյն իսկ մեր հայերէնի մէջ՝ Սաղմոսաց շատ տեղ բացայայտ և գեղեցիկ ոճը . օրինակ իմն, կարելի չէ հայերէն աւելի պարզ գրուցել, յետագայ Սաղմոսաց տուները . « Տէր « լուր աղօթից իմոց, աղաղակ իմ առքեղ եկեսցէ . մի դարձուցաներ « զերեսս քո յինչն : Կյեցաւ ոսկր իմ 'ի մարմին իմ . նմանեցայ ես հա « ւալրսան յանապատի : Զմոխիր որպէս հաց կերայ, և զըմպելին իմ « արտասուօք խառնեցի : Առուրք իմ որպէս հովանի անցին, և ես որ « պէս խոտ ցամաքեցայ » (Սաղ . ՃՍ) :

Խնդիր է առ գիտնականս, թէ արդեօք բոլոր 150 Սաղմոսք Դաւիթ Մարգարէին գրածն են, թէ այլոց . այդ տարակուսանաց պատճառը նոյն ինքն Սաղմոսագիրք մեզ կ'առաջարկեն . վասն զի կան Սաղմոսք որ սովորական « Սաղմոս 'ի Դաւիթ » խորագրի տեղ, այլ խորագիրներ կը կրեն . ինչպէս « Սաղմոս օրհնութեան որդւոյն Կորնայ,

յԱսափ, յեման, յիդիթովմայ » և այլն: Այս վերնագիրք կարծել կու. տան, որ 'ի Սաղմոսաց ոմանք Դաւթի գրածները չեն, այլ ըստ խորագրաց՝ որդւոց կորխայ, Ասափայ, եմանի և իդիթովմայ, և այլն: Այս կարծիքը մերժելի չէ, սակայն հեղինակաց տարբերութեան պատճառաւ Սաղմոսաց մէջ ընտրութիւն կարելի չէ անել. ամէնքը հաւասար աստուածային հոգւով գրուած են. և Դաւթի հետեող հեղինակք, նախատպին վարկը և յարգը ունին: Առաջնականոն Սաղմոսք՝ որք այժմ աշխարհաբար տաղաչափեալ 'ի լոյս կ'ընծային, բոլորն ևս Մարգարէին գրածները են:

Առաջիկայ հրատարակութեան պիտաւոր միտքը եղած է, երգելու կանոնաւոր եղանակաց աւելի յարմար անել Սաղմոսները. և ամենայն կերպով աշխատուած է, մութ տեղուանքը պարզել, աչքի առաջ ունելով զանազան նոր և հին թարգմանութիւնք Սաղմոսաց, ոմանք երգայական բնագորէն, և այլք եօթանասնից թարգմանութեան վըրայէն, բայց աւելի հետեւելով մեր հին նախեաց թարգմանութեան: Որովհետեւ ոչ իբր սրբազան Գիրք կը տպուի առաջիկայս, այլ իբրև յարասութիւնք, այսինքն այլ ձևերով մի և նոյն սաղմոսաց միտքը բացատրուած, յայդմ մասին մեծապէս կը տարբերի նախատպէն: Սակայն գրեթէ տուն առ տուն եղած է առաջիկայ տաղաչափեալ յարասութիւնս, խիստ քիչ տեղ մի տունը երկուսի բաժնուած է, աւելի շատ անգամ՝ երկու տունը 'ի մի ամփոփուած: Բազդատողք իսկոյն կը գտնան այս զանազանութիւնքը, որք առ հասարակ քիչ տեղ պատահած են: Հայ դպրութեան ճաշակ ունեցող անձինք, կարգալով ձեռագիրը, և համեմատելով բուն Սաղմոսաց հետ, շատ պարզ և իմանալի գտան այս տաղաչափեալ գրուածս: Ամէն լուսաւորեալ ազգաց մէջ տաղաչափուած են Սաղմոսք, որպէս և առ մեզ (զատ յայլոց) Յարութիւն Ազանուրեան իսահակեանց ըրած է. որոց շատը, եւրոպական երգանիշներով տպուած, բարեպաշտիկ քրիստոնեայ ընտանեաց գեղեցիկ երգարան կ'ընծային: Քանի փափաքելի էր գրողիս տեսնալ և լսել, ինչպէս ապաշխարութեան՝ նոյն և ցնծութեան Սաղմոսք, կանոնաւոր երգելով մեր հայ մանկանց բերան. այն ժամանակ առատապէս վարձատրուած պիտի համարիմ այս իմ մանրահոգ աշխատութիւնս:

Հ. ՔԵՐԵՈՎԱԷ Վ. ՔՈՒՇՆԵՐԵԱՆ

